ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2002

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

«ՀՀ պետական պարտքի 2002թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել և թարգմանել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Ա. Մարությանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Եգանյանը, Ս. Խանվելյանը, Գ. Վարդապետյանը, Ք. Խաչատրյանը և Ս. Իսրայելյանը:

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ձևավորումն ու կատարումն ընթացել է բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվել է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից:

Հարկ է նշել, որ դեֆիցիտի ֆինանսավորման համար ներգրաված միջոցների գերակշիռ մասը կազմել են փոխառու միջոցները, որոնք պետության կողմից վերցվել են վերադարձելիության, ժամկետայնության և վճարովիության սկզբունքով՝ ձևավորելով ՀՀ պետական պարտքը :

ՀՀ պետական պարտքը 2002թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 579,846.64 մլն. դրամ կամ 1,032.10 մլն. ԱՄՆ դոլար՝

	մլն.դրամ	մլն.դոլար
Պետական պարտք, այդ թվում՝	579,846.64	1,032.1
Ներքին պարտք	38,593.83	68.7
Արտաքին պարտք, որից՝	541,252.81	963.4
ԿԲ պարտք	98,039.22	174.51

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2002թ-ի առաջին կիսամյակում տեղի է ունեցել պետական պարտատոմսերի 27 թողարկում 21,000,000,000 դրամ ընդհանուր ծավալով, որից տեղաբաշխվել են 20,943,834,000 դրամ ծավալով պարտատոմսեր: Պահանջարկը թողարկման ծավալը գերազանցել է 2.22 անգամ (տես աղ. 1):

Աղյուսակ 1

	Թողարկում (դրամ)	Պահանջարկ (դրամ)	Տեղաբաշխում (դրամ)	Դեֆ.ֆին. (դրամ)	Պ/Թ
Հունվար	3,100,000,000	11,075,981,000	3,100,000,000	1,288,455,196	3.57
Փետրվար	3,700,000,000	9,972,625,000	3,700,000,000	736,967,746	2.70
Մարտ	3,700,000,000	7,712,543,000	3,700,000,000	360,749,574	2.08
Ապրիլ	3,300,000,000	5,209,373,000	3,300,000,000	-443,949,040	1.58
Մայիս	3,300,000,000	5,562,275,000	3,300,000,000	140,837,117	1.69
Հունիս	3,900,000,000	7,161,741,000	3,843,834,000	4,678,661	1.84
I կիսամյակ	**21,000,000,000**	**46,694,538,000**	**20,943,834,000**	**2,087,739,254**	**2.22**

27 թողարկումներից 4-ը պետական միջին ժամկետայնության պարտատոմսերի (ՄԺՊ) թողարկումներ են, իսկ մնացած 23-ը՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերի (ՊԿՊ):

I կիսամյակում պետական պարտատոմսերի տեղաբաշխման եկամտաբերությունը տատանվել է 10.9999%-19.9900% սահմաններում, իսկ միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 14.7860% (տես աղ. 2, գր. 1):

Աղյուսակ 2

	Նվազ. եկամտ. (%)	Առավ. եկամտ. (%)	Միջ. կշռվ. եկամտ. (%)	Տեղ. միջ. կշռ. ժամ. (օր)
Հունվար	13.8900	14.8378	14.3772	287
Փետրվար	13.1500	14.3899	13.8272	322
Մարտ	12.4556	15.0199	13.7206	358
Ապրիլ	10.9999	14.9997	13.7436	294
Մայիս	13.6999	17.6000	15.2796	419
Հունիս	14.3500	19.9900	17.5353	439
I կիսամյակ	**10.9999**	**19.9900**	**14.7860**	**355**

Պահանջարկի զգալի մասը բաժին է ընկել ՊԿՊ-երի շուկայում գործող 6 գործակալներին[1]՝ 64.57%-ը, կամ թողարկման 143.57%-ը, 13 դիլերներին բաժին է ընկել պահանջարկի 34.48%-ը կամ թողարկման՝ 76,66%-ը: Գանձապետական Պահառուին (ԳՊ) բաժին է ընկել պահանջարկի 0.95%-ը կամ թողարկման 2.12%-ը: Տեղաբաշխված ծավալի 61.92%-ը ձեռք են բերել գործակալները, 35.95%-ը՝ դիլերները, 2.13%-ը՝ ԳՊ-ն:

Պահանջարկի 86.02%-ը (40,165,456,000 դրամ) ներկայացվել է առաջին հայտով, իսկ 13.98%-ը (6,529,082,000 դրամ)՝ երկրորդ:

Պետական պարտատոմսերի առաջնային շուկայի հիմնական բնութագրերը 2002թ. հունիսի 30-ի դրությամբ

Գրաֆիկ 1



[1] Հաշվետու ժամանակաշրջանում Կրեդիտ-Երևան բանկը զրկվել է գործակալի կարգավիճակից:

Շրջանառության մեջ գտնվող ՊԿՊ-երի կառուցվածքը (ըստ թողարկման ժամկետայնության) 2002թ. հունիսի 30-ի դրությամբ

Գրաֆիկ 2



2002թ. հունիսի 30-ի դրությամբ պետական պարտատոմսերի շրջանառության ծավալը կազմել է 38,593.83 մլն. դրամ (23,300.0 մլն. դրամ ՊԿՊ և 15,293.8 մլն. դրամ ՄԺՊ), որը 2001թ. դեկտեմբերի 30-ի համեմատ աճել է 2,167.2 մլն. դրամով (30.12.2001թ-ի դրությամբ ներքին պարտքի ծավալը եղել է 36,426.81 մլն. դրամ, որից ՊԿՊ՝ 21,196.01 մլն. դրամ և ՄԺՊ՝ 15,230.80 մլն. դրամ): 2001թ. հունիսի 30-ի համեմատ ներքին պարտքի ծավալն աճել է 5,852.5 մլն. դրամով կամ 17.87%-ով: Միաժամանակ աճել է նաև պարտքի ժամկետայնությունը. 2001թ. հունիսի 30-ի դրությամբ այն եղել է 167 օր, դեկտեմբերի 30-ի դրությամբ՝ 209 օր, իսկ արդեն 2002թ. հունիսի 30-ի դրությամբ՝ 232 օր (տես գր. 2): Պարտքի միջին կշռված եկամտաբերությունը՝ հակառակը նվազել է՝ 2002թ. I կիսամյակի վերջում հասնելով 16.64%-ի (2001թ. հունիսի վերջի դրությամբ այն կազմել է 23.75%, դեկտեմբերին՝ 20.05%): Դեֆիցիտի ֆինանսավորումը առ 01.07.2002թ. կազմել է 2,087.7 մլն. դրամ, սպասարկման ծախսը՝ 3,187.57 մլն. դրամ:

Ինչ վերաբերվում է պետական պարտատոմսերի շուկայում տոկոսադրույքների դրսևորած միտումներին, ապա պետք է նշել, որ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը տարվա սկզբում կտրուկ անկում ապրեց՝ պայմանավորված ավելցուկային իրացվելիության շարունակական ավելացմամբ (տես գր. 3) և մեծ պահանջարկի ճնշմամբ, որի արդյունքում ուղիղ համեմատական կախվածությամբ ավելանում է նաև պահանջարկ/առաջարկ ցուցանիշը (տես գր. 4, 5):

Ավելցուկային իրացվելիության և եկամտաբերության կապը

Գրաֆիկ 3



Ավելցուկային ըացվելիության և Պահանջարկ/Թողարկում հարաբերության դինամիկան

Գրաֆիկ 4



Պահանջարկ/Թողարկում հարաբերության և միջին կշռված եկամտաբերության կապը

Գրաֆիկ 5



Ինչ վերաբերվում է պետական պարտատոմսերի թողարկման ժամկետայնություն-եկամտաբերություն կապին, ապա միջին ամսական ցուցանիշներով հունվար–հունիս ամիսներին նկատվում է ուղիղ կախվածություն, ինչը վկայում է ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում եկամտաբերության նորմալ կորի ձևավորման մասին (տես գր. 6): Եկամտաբերության առավելագույն ցուցանիշը հունիս ամսին պայմանավորված է ՄԺՊ երկու թողարկումներով, սակայն դեռևս մայիս ամսվա կեսերից էր նկատելի եկամտաբերության աճի միտումը: Այստեղ կարևոր նշանակություն ունի նաև այն, որ ժամկետայնության ամենամեծ ցուցանիշը ևս գրանցվել է հունիս ամսին: Ընդհանրապես պետք է նշել, որ 2002թ-ի առաջին կիսամյակում թողարկման ժամկետայնության աճը եղել է և ՊԿՊ-երի, և ՄԺՊ-երի թողարկման ժամկետայնության մեծացման հաշվին:

Պետական պարտատոմսերի ժամկետայնության և եկամտաբերության կապը

Գրաֆիկ 6



Հարկ ենք համարում նշել նաև, որ 2002թ-ի առաջին կիսամյակում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի նմանօրինակ զարգացումները կրում են օբյեկտիվ շուկայական բնույթ, քանի որ այդ ժամանակահատվածում պասիվ վարքագիծ են դրսևորել ինչպես թողարկողը՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, այնպես էլ ՀՀ կենտրոնական բանկը: Վերջինս գործարք է իրականացրել շուկայի մասնակիցներից բացառապես մեկի հետ, որը չէր կարող որևէ կերպ ազդել շուկայական իրավիճակի և սպասումների ձևավորման վրա:

ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկան 2002թ. առաջին կիսամյակում

2002թ-ի առաջին կիսամյակում ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի ծավալները 2001թ-ի նույն ժամանակահավածի երկրորդային շուկայում կատարված գործարքների ծավալների համեմատ նվազեց՝ պայմանավորված այդ ժամանակաշրջանում տոկոսադրույքների հարաբերական կայունությամբ և ներդրողների մոտ տոկոսների ապագայում անկման սպասումների ձևավորմամբ:

2002թ. առաջին կիսամյակի ընթացքում երկրորդային շուկայում կատարված գործարքներն ունեն հետևյալ տեսքը (տես աղ. 3, գր. 8)՝

- Կատարվել է 483 գործարք, որից՝ Կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից՝ 22 գործարք
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 18,486.9 մլն. դրամ, որից
- Առևտրային բանկերի կողմից 16,739.3 մլն. (ՊԿՊ՝ 12,800.7 մլն., ՄԺՊ՝ 3,938.7 մլն.) դրամ
- ԿԲ-ի կողմից 1,747.5 մլն. (ՊԿՊ՝ 279.5 մլն., ՄԺՊ՝ 1.468.0) դրամ
- Ընդամենը ՊԿՊ՝ 13,080.2 մլն. դրամ
- Ընդամենը ՄԺՊ՝ 5,406.7 մլն. դրամ
- Միջին կշռված եկամտաբերությունը՝ 13.9387%
- Միջին կշռված ժամկետը՝ 316 օր
- Միջին օրական ծավալը՝ 148.9 մլն. դրամ
- Գործարքների միջին օրական քանակը՝ 4
- ԿԲ-ի կողմից կատարված գործարքների միջին կշռված եկամտաբերությունը՝ 15.4294%
- ըստ ժամկետայնության գործարքները ունեն հետևյալ տեսքը.

Երկրորդային շրջանառության միջբանկային գործարքներն
ըստ ժամկետայնության 2002թ. I կիսամյակում

Գրաֆիկ 7



Գրաֆիկ 7-ից երևում է, որ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում ևս եկամտաբերության կորը նորմալ տեսքի է, ամենացածր եկամտաբերությունն ու ամենամեծ ծավալն ունեն 1-91 օր մարման ժամկետով պարտատոմսերը, իսկ ամենաբարձր եկամտաբերությունն ունեն 365 և ավել օր մարման ժամկետով պարտատոմսերը: Վերջիններիս շրջանառության ծավալը նույնպես մեծ է և պայմանավորված է հիմնականում հունիս ամսին միջին ժամկետայնությամբ պարտատոմսերի առաջնային երկու տեղաբաշխումներով: Պետք է նշել, սակայն, որ 92-364 օր տևողությամբ պարտատոմսերի իրացվելիության հարցում ժամկետայնությունը որևէ դեր չի խաղում, քանի որ դրանք շրջանառում են համարյա նույն եկամտաբերությամբ, իսկ այդ միջակայքում շրջանառության ամենափոքր ծավալ ու համեմատաբար բարձր եկամտաբերություն ունեն 183-273 օր տևողությամբ պարտատոմսերը:

Երկրորդային շուկայում կատարված գործառնությունները 2002թ. I կիսամյակում

Աղյուսակ 3

Ամիս	Ծավալ (դրամ)	Միջ. օր. ծավալ (դրամ)	Գործ. միջ. քանակ	Միջ.կշռ. եկամտ. (%)
Հուն-02	4,552,323,000	216,777,286	6	15.4546
Փետ-02	3,086,343,000	154,317,150	4	13.2283
Մար-02	2,965,607,000	141,219,381	4	12.3804
Ապր-02	2,925,021,000	139,286,714	3	12.0184
Մայ-02	1,961,540,000	98,077,000	3	13.7683
Հուն-02	2,996,098,000	142,671,333	3	15.8802
I կիսամյակ	**18,486,932,000**	**140,052,515**	**4**	**13.9361**

Երկրորդային շուկայում կատարված գործառնությունները

2002թ. I կիսամյակում

Գրաֆիկ 8



ՊԿՊ-երի և ՄԺՊ-երի տեսակարար կշիռը

2002թ. I կիսամյակում

Գրաֆիկ 9



Դրականն այն է, որ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2002թ. I կիսամյակում երկրորդային շուկայի շրջանառության մեջ աճել է ՄԺՊ-երի տեսակարար կշիռը՝ (2001թ. I կիսամյակում ՄԺՊ-երը եղել են 16%, ՊԿՊ-երը՝ 84%) չնայած այն հանգամանքին, որ 2001թ. I

կիսամյակում տեղի է ունեցել ՄԺՊ-երի 8 թողարկում, իսկ 2002թ. I կիսամյակում ընդամենը՝ 4 (տես գր. 9):

Պետական պարտատոմսերի շուկայում դրսևորվող բացասական միտումներից է ներդրողների կազմում դիլեր- բանկերի մեծ տեսակարար կշիռը՝ 70.01% (տես գր. 10,11):

Ներդրողների կառուցվածքը 2002թ. հունվարի 4-ի դրությամբ

Գրաֆիկ 10



Ներդրողների կառուցվածքը 2002թ. հունիսի 30-ի դրությամբ

Գրաֆիկ 11



ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ (ԳՊ)

2002թ. առաջին կիսամյակի ընթացքում Գանձապետական Պահառուն մասնակցել է կազմակերպված բոլոր 23 աճուրդներին: Ներդրման ծավալը կազմել է 446.192.000 դրամ, մարվել է 279.013.000 դրամի պարտատոմս (տես գր. 12, աղ. 4):

ԳՊ-ով ներդրումները և մարումները 2002թ. I կիսամյակում

Գրաֆիկ 12



	Հուն-02	Փետ-02	Մար-02	Ապր-02	Մայ-02	Հուն-02
Ներդ. ծավ	90727000	39173000	100412000	128060000	53482000	34338000
Մարված	5794000	34982000	98281000	51420000	46458000	42078000
Ամս.մ/եկ %	14.38	13.79	12.94	13.67	14.32	15.05

Ներդրման ծավալը 2001թ-ի 1-ին կիսամյակի նկատմամբ նվազել է 15.35%-ով, 2001թ-ի 2-րդ կիսամյակի նկատմամբ աճել է 9.16%-ով: 2002թ. հուլիսի 1-ի դրությամբ բացված դեպո հաշիվների թիվը կազմել է 497, ինչը 23.33 %-ով ավելին է նախորդ տարվա նույն ցուցանիշից (տես գր. 13):

Բացված և գործող դեպո հաշիվների քանակը 2002թ. հունիսի 30-ի դրությամբ

Գրաֆիկ 13



	Հուն-02	Փետ-02	Մար-02	Ապր-02	Մայ-02	Հուն-02
բացված	468	473	478	485	494	497
գործող	180	183	179	187	192	183

Ընդամենը 2002թ. հունիսի 30-ի դրությամբ շրջանառության մեջ է եղել 587.495.000 դրամի պարտատոմս (տես գր. 14):

ԳՊ-ով շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը

2002թ. հունիսի 30-ի դրությամբ

Գրաֆիկ 14



ԳՊ-ով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա 1-ին կիսամյակի նկատմամբ աճել է 11.81%-ով, իսկ 2-րդ կիսամյակի նկատմամբ աճել է 34.03%-ով:

Աղյուսակ 4

2002թ. 1-ին կիսամյակ	Տեղաբաշխում	Մարում	Միջին եկամտաբերություն
I եռամսյակ	230.312.000	139.057.000	13.82%
II եռամսյակ	215.880.000	139.956.000	14.14%
Ընդամենը	446.192.000	279.013.000	

2001թ-ի 2-րդ կիսամյակում կայացած ԳՊ մասնակցությամբ աճուրդների միջին եկամտաբերությունը կազմել է 17.57%, 2002թ. 1-ին կիսամյակում՝ 13.97%:

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2001 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատ ՀՀ արտաքին պետական պարտքը (ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ, և նրանց կողմից տրամադրված արտաքին երաշխիքներ) 2002 թվականի հունիսի 30-ի դրությամբ աճել է 57.942 մլն ԱՄՆ դոլարով և կազմել է 963.409 մլն ԱՄՆ դոլար, որից.

- 762.204 մլն. ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության արտաքին պարտավորությունները,
- 174.506 մլն. ԱՄՆ դոլարը ՀՀ կենտրոնական բանկի արտաքին վարկային պարտավորությունները,
- 26.699 մլն. ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով պարտավորությունները:

ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքը

Գրաֆիկ 15



2002թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պարտավորությունների գծով ստորագրվել է մեկ նոր վարկային պայմանագիր՝

✓ Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման վարկային ծրագիր (վարկառու՝ ՀՀ կառավարություն): Վարկի գումարը 0.8 մլն. SDR:

Այս վարկը, ինչպես և Միջազգային Զարգացման Գործակալության կողմից մինչ այդ տրամադրված բոլոր վարկերը, տրամադրվել է արտոնյալ պայմաններով:

2002թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պարտավորությունների գծով սպասարկումը կազմել է 22.58 մլն. ԱՄՆ դոլար, որից.

- ՀՀ կառավարության արտաքին պարտավորությունների գծով՝ 12.47 մլն. ԱՄՆ դոլար, որից 3.39 մլն. ԱՄՆ դոլար տոկոսավճարների գծով և 9.08 մլն. ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով,

- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով՝ 8.53 մլն. ԱՄՆ դոլար, որից 0.73 մլն. ԱՄՆ դոլար տոկոսավճարների գծով և 7.81 մլն. ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով,
- ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով՝ 1.58 մլն. ԱՄՆ դոլար, որից 0.38 մլն. ԱՄՆ դոլար տոկոսավճարների գծով և 1.2 մլն. ԱՄՆ դոլարը հիմնական գումարի մարման գծով (տես գր. 15, 16):

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման կառուցվածքը
2002թ. I կիսամյակում

Գրաֆիկ 16



2002թ. հունիսի վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտքի սպասարկման գծով ժամկետանց վճարումները Ռուսաստանի Դաշնության և Թուրքմենստանի կողմից տրամադրված վարկերի գծով կազմել են շուրջ 28 մլն. ԱՄՆ դոլար, որից 19.8 մլն. ԱՄՆ դոլարը հիմնական գումարի մարման գծով:

2002թ. առաջին կիսամյակի ընթացքում շարունակվել է բանակցային գործընթացը Ռուսաստանի Դաշնության և Թուրքմենստանի հետ պարտքերի վերաձևակերպման ուղղությամբ:

2002թ. փետրվարի 11-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության նկատմամբ Վրաստանի պարտքի վերաձևակերպման մասին» պայմանագիրը:

2002թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պարտավորությունների գծով ստացվել է 31.2 մլն. ԱՄՆ դոլար՝ ամբողջությամբ ՀՀ կառավարության պարտավորությունների գծով:

Հաշվի առնելով որ կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պարտավորությունների գծով ստացվել է 31.2 մլն. ԱՄՆ դոլար և կատարվել է 18.09 մլն. ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում, 2001թ. վերջի համեմատ ՀՀ արտաքին պարտքը պետք է աճեր ընդամենը 13.11 մլն. ԱՄՆ դոլարով:

Սակայն, հաշվի առնելով, որ 2002թ. առաջին կիսամյակի ընթացքում տոկոսավճարների գծով կուտակվել է նոր ժամկետանց վճարումներ 2 մլն. ԱՄՆ դոլարի չափով, ինչպես նաև.

- ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերը,
- յուրաքանչյուր եռամսյակի վերջի համար արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ հաշվարկվում է եռամսյակի վերջի օրվա դրությամբ դոլարի նկատմամբ համապատասխան արժույթների կուրսերի հիման վրա,
- 2002թ. առաջին կիսամյակի ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրանց կուրսերը զգալի աճել են,

ՀՀ արտաքին պարտքի ծավալը 2002թ. առաջին կիսամյակի ընթացքում աճել է 57.942 մլն. ԱՄՆ դոլարով:

Հարկ է նշել, որ 1999 թվականից ի վեր SDR-ի կուրսը ԱՄՆ դոլարի նկատմամբ հիմնականում անկման միտում ուներ, սակայն 2002թ. հունիսին արձանագրվեց հակառակ միտումը՝ եթե 2002թ. մարտին վերջին 1 SDR = 1.24691 ԱՄՆ դոլարի, ապա 2002թ. հունիսի վերջին 1 SDR = 1.33046 ԱՄՆ դոլարի (տես գր. 17):

SDR-ի փոխարժեքի դինամիկան

Գրաֆիկ 17



2002թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի 74.5 %-ը կազմել են SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերը (տես գր. 18):

ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքը ըստ տրամադրման արժույթի

Գրաֆիկ 18



ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններն ըստ դոնորների

Գրաֆիկ 19



2002թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտավորությունների (առանց երաշխիքների) 78%-ը կազմում են բազմակողմանի վարկատուներից ստացված վարկային միջոցները, որից 59%-ը ՀՀ կառավարության կողմից ստանձնած վարկային պարտավորությունների գծով և 19%-ը Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) կողմից ՀՀ կենտրոնական բանկին տրամադրած վարկերի գծով, 22%-ը կազմում են երկկողմանի վարկատուներից ստացված վարկերը (տես գր. 19, 20, 21, 22):

ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքն ըստ դոնորների

Գրաֆիկ 20



ՀՀ կառավարության և ԿԲ-ի արտաքին պարտավորությունների գծով բազմակողմ դոնորների կառուցվածքը

Գրաֆիկ 21



ՀՀ կառավարության և ԿԲ-ի արտաքին պարտավորությունների գծով երկկողմ դոնորների կառուցվածքը

Գրաֆիկ 22



Ընդհանուր առմամբ արտոնյալ վարկերը ՀՀ արտաքին պարտքի մեջ 2002թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ կազմել են 79%:

Արտաքին վարկերը, որոնց համար պետք է վճարվի տոկոսավճար (սպասարկման վճար) մինչև 0.75% տոկոսադրույքով, 2002թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ կազմել են ՀՀ արտաքին պետական պարտքի շուրջ 72.9% -ը:

2002թ. առաջին կիսամյակի վերջում Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի 85%-ի տոկոսավճարը հաստատուն տոկոսադրույքով է և 15%-ը՝ լողացող տոկոսադրույքով (Libor-ի հիմքի վրա):

Հարկ է նշել, որ 2002թ. առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է Libor-ի համեմատաբար ցածր դրույքաչափ, որի միջին մեծությունը ԱՄՆ դոլարով վեցամսյա դեպոզիտների համար կազմել է ընդամենը 2.037% :

Չնայած 70%-ը SDR-ով և 85% հաստատուն տոկոսադրույքով արտաքին պարտքի կազմը Հայաստանին ներկայումս զերծ է պահում միջազգային շուկաներում ձևավորվող բարձր տոկոսադրույքների և միջազգային շուկաներում գործող հիմնական արժույթների կուրսերում հնարավոր էական տատանումների բացասական ազդեցությունից, սակայն արդիական է մնում արտաքին պարտքի կառավարման ռիսկայնության գնահատման և ռիսկերի կառավարման գործուն համակարգի մշակման անհրաժեշտությունը:

Միայն արտոնյալ պայմաններով արտաքին վարկերի ներգրավումը, ինչպես նաև արդեն առկա ոչ արտոնյալ վարկերի վերաձևակերպումը կամ այլ միջոցներով մարումը թույլ կտա թեթևացնել Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի բեռը: